ԵՐԵԽԱՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Դավիթ Թումասյան
ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտի իրավական ապահովման և վիճակագրական վարչության պետ, իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ

Քրեաիրավական պաշտպանությունը մարդու, նրա իրավունքների և ազատությունների պաշտպանությունն է հանցավոր ոտնձգությունից կամ դրանց իրական վտանգից: Քրեաիրավական պաշտպանության ենթակա են ոչ բոլոր հասարակական հարաբերությունները, այլ միայն դրանք, որոնց խախտումը կարող է հանգեցնել լուրջ հետևանքների, կամ որոնք ոտնձգում են առավել արժեք ներկայացնող հարաբերությունները: Ոչ միայն հանցավոր ոտնձգություններից, այլ նաև դրանց իրական վտանգից անձանց պաշտպանության պոզիտիվ պարտականությանն անդրադարձել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը:[1] Դա փաստում է, որ հանցավոր ոտնձգություններից և դրա իրական վտանգից երեխայի և նրա իրավունքների պաշտպանությունը պետք է իրականացվի նաև քրեաիրավական մեխանիզմներով:

Երեխաները, իրենց տարիքային, հոգեբանական, սոցիալական և այլ առանձնահատկություններից ելնելով, պետք է ստանան այնպիսի քրեաիրավական պաշտպանություն, որը կբխի երեխայի լավագույն շահերից և միտված կլինի այդ շահերի պաշտպանությանը:

Հայաստանի Հանրապետությունում առկա է երեխաների պաշտպանության հիմնահարցերին վերաբերող և՛ միջազգային, և՛ ազգային իրավական ծավալուն բազա: Ընդ որում, ՀՀ-ն վավերացրել է երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտի հիմնական միջազգային իրավական ակտերը: Դրանց թվին են պատկանում՝

1. Երեխայի իրավունքների մասին Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիան[2], այդ կոնվենցիայի՝ Մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի մասին[3] և Զինված հակամարտություններին վերաբերող կամընտիր արձանագրությունները[4],

2. Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի ՄԱԿ-ի կոնվենցիան և դրա կամընտիր՝ Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների

---

[1] Մարդու իրավունքների եվրոպական դատարանն Օսմանն ընդդեմ Մեծ Բրիտանիայի գործով նշել է, որ անձի կամ անձանց պաշտպանությանն ուղղված նախականխիչ միջոցառումներ ձեռնարկելու պետության պոզիտիվ պարտականությունը ծագում է այն դեպքում, երբ իշխանությունները գիտեին կամ պարտավոր էին իմանալու մարդու կյանքի իրական և անմիջական ռիսկի գոյության մասին, որը կապված է երրորդ անձանց հանցավոր գործողությունների հետ: Եթե իշխանությունը նման հանգամանքներում, իր իրավասության շրջանակում չի ձեռնարկել այնպիսի միջոցառումներ, որոնք կարող էին օգնել խուսափելու ռիսկից, ապա դա կդիտվի կյանքի իրավունքի խախտում: Դատարանը նշել է, որ այս դեպքում դիմողը պետք է միայն ապացուցի, որ պետությունը չի ձեռնարկել ողջամտորեն ակնկալվող այն միջոցառումները, որոնք նպատակ ունեին խուսափել իրական և անմիջական ռիսկից:

[2] ՀՀ-ում ուժի մեջ է մտել 1993թ.-ի հունիսի 22-ին:

[3] ՀՀ-ում ուժի մեջ է մտել 2005թ.-ի հուլիսի 30-ին:

[4] ՀՀ-ում ուժի մեջ է մտել 2005թ.-ի մարտի 21-ին:

առևտրի կանխարգելման, արգելման և պատժի մասին թիվ 2 արձանագրությունը[1],

3. Երեխաների պաշտպանության և օտարերկրյա որդեգրման բնագավառում համագործակցության մասին կոնվենցիան (Հաագայի կոնվենցիա)[2],

4. Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների մասին Եվրոպայի խորհրդի 2005թ.-ի կոնվենցիան[3],

5. Աշխատանքի միջազգային կազմակերպության (ՄԱԿ) Երեխաների աշխատանքի վատթարագույն ձևերի մասին կոնվենցիան[4],

6. ԱՄԿ-ի Հարկադիր աշխատանքի վերացման մասին կոնվենցիան[5] և այլն:

Սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին ԵՄ-ի կոնվենցիան[6] ՀՀ-ն դեռ չի վավերացրել:

Երեխաների պաշտպանության ոլորտին վերաբերող ազգային օրենսդրությունից առանձնահատուկ պետք է նշել հետևյալ իրավական ակտերը՝ ՀՀ քրեական օրենսգիրքը, ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, ՀՀ ընտանեկան օրենսգիրքը, «Երեխաների իրավունքների մասին» 1996թ. մայիսի 29-ին ընդունված ՀՀ օրենքը:

Երեխայի իրավունքների քրեաիրավական պաշտպանությունն ազգային օրենսդրության մակարդակով իրականացվում է ՀՀ քր. օր.-ով: Մարդու դեմ ուղղված հանցագործությունների բաժնում առանձնացված է ընտանիքի և երեխայի շահերի դեմ ուղղված հանցագործությունների գլուխը, սակայն երեխաների իրավունքների քրեաիրավական պաշտպանությունն իրականացվում է ՀՀ քր. օր.-ի այլ հոդվածներով նույնպես: Երեխայի իրավունքների և ազատությունների քրեաիրավական պաշտպանությունը նախատեսված է, օրինակ, ՀՀ քր. օր.-ի 119-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով (անչափահասի կամ հանցավորից նյութական կամ այլ կախվածություն ունեցող անձի, ինչպես նաև առևանգված կամ որպես պատանդ վերցված անձի նկատմամբ ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը), 124-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով (վեներական հիվանդությամբ կամ այլ սեռավարակներով վարակելը, որը կատարվել է անչափահասի նկատմամբ) և այլն: Այդ իսկ պատճառով երեխաների դեմ ուղղված հանցագործությունների ուսումնասիրությունը չի սահմանափակում ՀՀ քր. օր.-ի 20-րդ գլխի շրջանակներով, այլ ներառում է նաև այլ գլուխներում նախատեսված հանցագործություններ[7]:

Հարկ է նշել, որ ՀՀ քր. օր. հիմնականում ներառում է ՄԱԿ-ի, ԱՄԿ-ի, ԵՄ-ի կոնվենցիաներով սահմանվող և քրեականացման պահանջ ներկայացնող դրույթները, սակայն առկա են որոշ արարքներ, որոնք դեռ քրեականացված չեն, օրինակ՝ մանկական պոռնոգրաֆիա դիտելը, մանկական մարմնավաճառության ծառայություններից օգտվելը և այլն:

Ձևավորված իրավական բազայի առկայությունը դեռ չի նշանակում, որ այն վերանայման կարիք չունի և չի ունենա, մանավանդ եթե հաշվի առնվեն մարդու իրավունքների պաշտպանության միտումները: Ինչպես արդարացիորեն նշվել է, Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի ընդունմամբ ավարտվեց երեխայի իրավունքների պաշտպանության կոնցեպտուալ հիմքերի ձևավորումը: Եվ թեև Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայում արդեն իսկ ամրագրվել է երեխայի իրավունքների բավականին լայն շրջանակ, այնուամենայնիվ երեխայի իրավունքնե-

---

[1] ՀՀ-ում ուժի մեջ է մտել 2003թ.-ի դեկտեմբերի 25-ին:
[2] ՀՀ-ում ուժի մեջ է մտել 2007թ.-ի հունիսի 1-ին:
[3] ՀՀ-ում ուժի մեջ է 2008թ.-ի մարտի 20-ից:
[4] ՀՀ-ում ուժի մեջ է 2006թ.-ի հունվարի 2-ից:
[5] ՀՀ-ում ուժի մեջ է 2005թ.-ի դեկտեմբերի 17-ից:
[6] ՀՀ-ի կողմից ստորագրվել է 2010թ.-ի սեպտեմբերի 29-ին:
[7] Նման դեպքերում փոփոխվում է երեխաների պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերությունները որպես հիմնական կամ լրացուցիչ օբյեկտ ընկալելու հարցը:

րի տեսության և նոր կոնցեպտուալ գաղափարախոսության ձևավորման պայմաններում դրանք ունենում են վերանայման և վերաիմաստավորման որոշակի կարիք[1]: Այս հարցն առավել արդիական է երեխաների քրեաիրավական պաշտպանության համատեքստում:

Երեխաների դեմ ուղղված հանցագործությունների թիվն ինքնին մեծ չէ, սակայն հաշվի առնելով այն, որ յուրաքանչյուր հանցագործություն մեկ, իսկ երբեմն նաև մի քանի երեխաների խեղված ճակատագիր է, ապա անգամ մեկ հանցագործության առկայությունը լուրջ մտահոգություններ է առաջացնում, առավել ևս, որ երբեմն այդ հանցագործությունները կատարում են այն անձինք, ովքեր պետք է պաշտպանեն այդ երեխային և /կամ զբաղվեն այդ երեխայի խնամքով կամ դաստիարակությամբ:

Այսպես, 2016թ. ընթացքում ՀՀ քննչական կոմիտեի վարույթում է գտնվել երեխաների նկատմամբ կատարված հանցագործությունների վերաբերյալ 200 քրեական գործ: Ընդ որում, դրանցից 175-ը վարույթ է ընդունվել հաշվետու ժամանակաշրջանում, իսկ 25-ը անավարտ մնացած քրեական գործեր են եղել[2]:

Վերը նշված հանցագործություններով 122 անձինք ներգրավված են եղել որպես մեղադրյալներ, ընդ որում դրանցից 9-ը եղել են 14-16 տարեկան, 15-ը՝ 16-18 տարեկան, 66-ը՝ 18-35 տարեկան, 32-ը՝ 35 տարեկանից բարձր: Այսինքն՝ մեղադրյալներից 24-ը (19,7%-ը) հանցագործությունը կատարելու պահին եղել են անչափահաս: Այս ցուցանիշը մտահոգիչ է այնքանով, որ հանցավոր դրսևորումներն իրականացվում են, երբ տարիքով մեծ երեխաները սկզբնական փուլում ճնշում են տարիքով փոքրերին, իսկ հետագայում արդեն սկսում թույլ տալ հանցավոր արարքներ, ներառյալ՝ բռնի հանցագործություններ, օրինակ, սպանություն, սեքսուալ բնույթի բռնի գործողություններ և այլն:

Ինչպես նշվում է մասնագիտական գրականության մեջ, 17 տարեկան հասակն անցումային շրջան է դեռահասությունից երիտասարդություն: Այս տարիքում սրվում են սեփական արժեքների կարևորությունն ու նշանակությունը, չնայած երեխաները շատ հարցերում դեռևս ենթակա են արտաքին ազդեցություններին: Պատանեկության կարևորագույն ձեռքբերումը կենսական պլանների ձևավորումն է: Նրանց համար, ովքեր դժվար են անցնում 17 տարեկանի ճգնաժամը, հատուկ են բազմատեսակ վախեր: Սեփական անձի, ծնողների և հարազատների առաջ պատասխանատվության զգացումը, իրական ձեռքբերումներն այս շրջանում մեծ բեռ են պատանու համար: Սրան գումարվում են նաև նոր կյանքի, սխալվելու հավանականության, բուի ընդունվելու, տղաների պարագայում՝ զորակոչվելու հանգամանքները: Բարձր տագնապայնությունն ու այդ ֆոնի վրա առաջ եկող վախերը կարող են նևրոտիկ արձագանքների պատճառ դառնալ: Այս տարիքային փուլն ապագային նպատակամիտվածության, անձի կայունացման, կայուն աշխարհայացքի ձևավորման, կյանքում սեփական տեղի և դիրքի հստակեցման շրջանն է: Այս փուլում ավարտվում է ֆիզիկական, սեռական զարգացման և հասունացման գործընթացը[3]:

---

[1] Մանրամասն տե՛ս **Manful E., McCrystal P.** Conceptualisation f Children's Rights/ Child Care in Practice. № 1. 2010. էջեր 83-97:

[2] 200 քրեական գործերից 4-ը վերաբերել է սպանությանը (հոդվ. 104), 4-ը՝ անզգուշությամբ մահ պատճառելուն (հոդվ. 109), 6-ը՝ ինքնասպանության հասցնելուն (հոդվ. 110), 13-ը՝ դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելուն (հոդվ. 112), 5-ը՝ դիտավորությամբ առողջությանը թեթև վնաս պատճառելուն (հոդվ. 117), 25-ը՝ ծեծին (հոդվ. 118), 4-ը՝ ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելուն (հոդվ. 119), 2-ը՝ անզգուշությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելուն (հոդվ. 120), 3-ը՝ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելուն (հոդվ. 121), 5-ը՝ մարդուն առևանգելուն (հոդվ. 131) և այլն:

[3] Տե՛ս **Ալեքսանյան Ա., Գասպարյան Ա.** Անչափահասների մասնակցությամբ գործերով մասնագիտացված քննիչների պատրաստման մոդուլ: Մոդուլ 4. Հոգեբանության ոլորտ, Երևան, 2017, էջեր 9-10:

Վերը նշված փոփոխությունները չեն կարող չանդրադառնալ երեխայի հոգեբանության վրա, ինչը կարող է հանգեցնել նաև դևիանտ վարքագծի ձևավորմանը և հանցավոր արարքների կատարմանը: Բացառված չէ նաև, որ պատանեկության փուլում ինքնահաստատումը մղի հանցավոր արարքների կատարման նաև իրենցից թույլ անձանց նկատմամբ, ովքեր, տարիքային, հոգեբանական կամ այլ հանգամանքներից ելնելով, ի վիճակի չեն դիմադրություն ցույց տալու կամ չեն գիտակցում դրա անհրաժեշտությունը: Այս դեպքում առաջնահերթ թիրախ կարող է ընտրվել շրջապատում գտնվող մանկահասակը:

2016թ.-ին երեխայի դեմ կատարված հանցագործություններով ներգրավված 122 մեղադրյալներից 12-ն ունեցել են տարրական կրթություն, 95-ը՝ միջնակարգ, 2-ը՝ միջին մասնագիտական, 3-ը՝ բարձրագույն: Ինչպես երևում է, երեխաների նկատմամբ հանցագործություն կատարած անձանց համապատասխանաբար 1,6%-ը և 2,5%-ը կազմում են միջին մասնագիտական և բարձրագույն կրթություն ունեցող անձինք, ինչն անուղղակի վկայում է, որ բարձրագույն կրթությամբ անձինք առավել զգուշավոր և գիտակցված են մոտենում երեխաների իրավունքների պաշտպանությանը, չնայած չի բացառվում նաև լատենտայնության հանգամանքը:

122 մեղադրյալներից միայն 6-ն են նախկինում եղել դատապարտված[1]:

Վարույթում գտնվող գործերով եղել են թվով 175 տուժողներ, որոնցից 47-ը՝ մինչև 12 տարեկան (26,9%), 14-ը՝ 12-14 տարեկան (8%), 72-ը՝ 14-16 տարեկան (41,1%), 42-ը՝ 16-18 տարեկան (24%):

2016թ. ընթացքում ավարտվել են երեխաների նկատմամբ կատարված հանցագործությունների վերաբերյալ 138 քրեական գործեր: 67 քրեական գործի վարույթ կարճվել է, որոնցից 45-ը՝ արդարացման հիմքով, իսկ 22-ը՝ ոչ արդարացման:

Մեղադրական եզրակացությամբ դատարան է ուղարկվել 71 քրեական գործ 83 անձի վերաբերյալ[2]:

Ինչպես երևում է վերը նշված վիճակագրությունից, երեխաների նկատմամբ կատարված հանցագործությունները թե՛ քանակական, թե՛ որակական հատկանիշներով բավականին մտահոգիչ են, ինչը հիմք է հանդիսանում այս հանցագործությունների ուսումնասիրությունն իրականացնել առավել համակարգված և ամբողջական:

Ինչպես նշվել է, երեխայի իրավունքների քրեաիրավական պաշտպանությունն ազգային օրենսդրության մակարդակով իրականացվում է բացառապես ՀՀ քր. օր.-ով: Մարդու դեմ ուղղված հանցագործություններից առանձնացված է ընտանիքի և երեխայի շահերի դեմ ուղղված հանցագործությունները, սակայն երեխաների իրավունքների քրեաիրավական պաշտպանությունն իրականացվում է ՀՀ քր. օր.-ի այլ գլուխներում նախատեսված հոդվածներով նույնպես:

---

[1] Այդ մեղադրյալները նախկինում դատապարտված են եղել ծեծի, բռնաբարության, 16 տարին չլրացած անձի հետ սեռական հարաբերություն ունենալու, անառակաբարո գործողության համար:

[2] Մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկված գործերը վերաբերում էին՝ 2-ը սպանությանը (հոդվ. 104), 7-ը՝ դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելուն (հոդվ. 112), 1-ը՝ դիտավորությամբ առողջությանը թեթև վնաս պատճառելուն (հոդվ. 117), 9-ը՝ նախատեսված ծեծին (հոդվ. 118), 1-ը՝ անզգուշությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելուն (հոդվ. 121), 5-ը՝ մարդուն առևանգելուն (հոդվ. 131), 1-ը՝ սպանության կամ առողջությանը ծանր վնաս պատճառելու, կամ գույք ոչնչացնելու սպառնալիքին (հոդվ. 137), 4-ը՝ սեքսուալ բնույթի բռնի գործողություններին (հոդվ. 139), 34-ը՝ սեռական հարաբերությանը 16 տարին չլրացած անձի հետ կամ սեքսուալ բնույթի գործողություններ կատարելը 16 տարին չլրացած անձի նկատմամբ (հոդվ. 141), 4-ը՝ անառակաբարո գործողություններին (հոդվ. 142), 1-ը՝ անձնական կամ ընտանեկան կյանքի մասին տեղեկություններ ապօրինի հավաքելուն, պահելուն, օգտագործելուն կամ տարածելուն (հոդվ. 144), 2-ը այլ հանցագործություններ են:

Առհասարակ, հաշվի առնելով ՀՀ քր. օր.-ի հոդվածներում երեխաների պաշտպանությանը վերաբերող նորմների կառուցվածքային առանձնահատկությունները, երեխաների դեմ ուղղված հանցագործություններ բովանդակող նորմերը կարելի է բաժանել 3 խմբի՝

1) հոդվածներ, որոնք վերաբերելի են միայն երեխաներին, օրինակ՝ ՀՀ քր. օր.-ի 106-րդ, 132.2-րդ, 165-րդ, 168-րդ և այլ հոդվածներ,

2) հոդվածներ, որտեղ անչափահասի նկատմամբ հանցանք կատարելը համարվում է ծանրացնող հանգամանք, օրինակ՝ ՀՀ քր. օր.-ի 119-րդ, 131-րդ, 133-րդ, 218-րդ և այլ հոդվածներով,

3) հոդվածներ, որոնք որևէ տարբերակում չեն նախատեսում անչափահասների վերաբերյալ, օրինակ՝ ՀՀ քր. օր-ի 112-րդ, 129-րդ և այլն (ՀՀ քր. օր-ի Հատուկ մասի հոդվածների մեծամասնությունը):

Կախված այն հանգամանքից, թե երեխայի որ իրավունքի կամ շահի նկատմամբ է կատարվում ոտնձգությունը, նպատակահարմար է տարանջատել երեխաների նկատմամբ կատարվող հետևյալ հանցավոր արարքները՝

1) երեխայի կյանքի և առողջության դեմ ուղղված,

2) երեխայի ազատության, պատվի և արժանապատվության դեմ ուղղված,

3) երեխայի սեռական ազատության և սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված,

4) երեխայի այլ իրավունքների և շահերի դեմ ուղղված:

Երեխաների պաշտպանությունը պետք է իրականացվի ոչ միայն երեխաների համար անծանոթ (և հաճախ որպես վտանգավոր ընկալվող անձանց կողմից), այլ նաև այն անձանցից, որոնց վրա դրված է երեխայի խնամքի և/կամ դաստիարակության պարտականությունը:

2015թ.-ին ՀՀ քր. օր.-ի 138-142-րդ հոդվածներով ՀՀ քննչական կոմիտեում քննվել է 71 քրեական գործ: Քրեական հետապնդման վիճակում գտնվող 71 անձանց գերակշիռ մասը տուժողների հետ գտնվել է փաստացի ամուսնական կապերի մեջ (30 քրեական գործ), 12 գործով տուժողները և ենթադրյալ հանցանք կատարած անձինք գտնվել են ընկերական հարաբերությունների մեջ, 9 դեպքում եղել են ծանոթներ, 7 դեպքում՝ հարևաններ, 5 գործով ենթադրյալ հանցանքը կատարվել է հոր կամ խորթ հոր, 2 գործով՝ տուժողի հարազատի (հորեղբոր որդու, մորաքրոջ ամուսնու), 1 դեպքում՝ մոր նախկին ամուսնու, 1 գործով՝ ուսուցչի, իսկ 4 դեպքում՝ անծանոթների կողմից:

Ընտանիքի ներսում (անչափահաս փաստացի կին-ամուսին, ծնող-երեխա) ոտնձգությունների դեպքերի առթիվ հարուցվել է 35 քրեական գործ, որը կազմում է գործերի 49,3%-ը[1]:

Ինչպես երևում է, ՀՀ քր. օր.-ի 138-142-րդ հոդվածներով 2015 թվականին ՀՀ քննչական կոմիտեում քննված գործերից միայն 4 անձ են տուժող երեխային անծանոթ եղել (ընդհանուր թվի 5,6%), չնայած եղել են համացանցային ծանոթություններ (16,9%): Սակայն այս դեպքում էլ ակնհայտ է, որ երեխայի նկատմամբ անծանոթ կամ փաստացի անծանոթ անձանց տեսակարար կշիռը սեռական հանցագործություն կատարած անձանց թվում չի գերազանցում մեկ քառորդը: Այստեղից կարելի է եզրահանգել, որ այն դիրքորոշումը, որ երեխան ապահով է իրեն զգում ընտանիքում, ոչ միշտ է համապատասխանում իրականությանը: Իհարկե, ասվածն ամենևին չի նշանակում, որ երեխաներն ընտանիքում անպաշտպան են և մշտապես ենթարկվում են բռնության, բայց, այնուամենայնիվ, կանխարգելիչ միջոցառումների պատշաճ իրականացումը խիստ անհրաժեշտ է:

---

[1] Տե՛ս «ՀՀ քննչական կոմիտեի վարույթում 2015 թվականին սեռական բնույթի հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերով նախաքննության ընթացքում անչափահաս տուժողների իրավունքների պաշտպանության վիճակի ամփոփում»: Երևան, 2016, էջեր 17-18:

2016թ.-ին ՀՀ քր. օր.-ի 138-142-րդ հոդվածներով ՀՀ քննչական կոմիտեում քննված գործերով տուժող է ներգրավվել 162 անձ, որոնցից 115-ը եղել են անչափահաս (տուժողների 71%-ը): Հանցագործության կատարման պահին տուժողներից 2–ը եղել են 5 տարեկան, 2-ը՝ 6 տարեկան, 1-ը՝ 7 տարեկան, 4-ը՝ 8 տարեկան, 3-ը՝ 9 տարեկան, 2-ը՝ 10 տարեկան, 5-ը՝ 11 տարեկան, 1-ը՝ 12 տարեկան, 7-ը՝ 13 տարեկան, 17-ը՝ 14 տարեկան, 48-ը՝ 15 տարեկան, 20-ը՝ 16 տարեկան, 3-ը՝ 17 տարեկան: Նման վիճակագրությունը վկայում է, որ սեռական հանցագործությունների դեպքում երեխաներն առավել խոցելի են, քան չափահասները, ինչը կրկին վերահաստատում է կանխարգելիչ արդյունավետ միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը:

Երեխաների դեմ ուղղված հանցագործություններն առանձնանում են ոչ միայն իրենց բնույթով, այլ նաև հանցագործությունների իրականացման մեխանիզմերով:

Երեխաների դեմ ուղղված հանցագործություն իրականացրած անձանց մի մասը խոստովանում է, որ երեխայի դեմ ուղղված հանցագործությունն իրականացրել է հաշվի առնելով երեխայի ֆիզիկապես թույլ լինելը կամ դեպքի վերաբերյալ այլ անձանց պատմելու երեխայի վախը:

Ելնելով երեխայի տարիքային, հոգեբանական և սոցիալական առանձնահատկություններից և հաշվի առնելով տարբեր տարիքային խմբերի երեխաների նկատմամբ կատարված հանցագործությունների ընկալումը և ազդեցությունը՝ ցանկալի է երեխայի դեմ ուղղված հանցագործությունները դասակարգել չորս խմբի՝ ըստ երեխայի տարիքային առանձնահատկությունների՝

- մանկահասակներ՝ մինչև 7 տարեկան երեխաների նկատմամբ կատարված,
- մանկահասակներ՝ 7-12 տարեկան երեխաների նկատմամբ կատարված,
- անչափահասներ՝ 12-16 տարեկան երեխաների նկատմամբ կատարված,
- անչափահասներ՝ 16-18 տարեկան երեխաների նկատմամբ կատարված[1]:

Մանկահասակների դասակարգումը երկու խմբի պայմանավորված է այն հանգամանքով, որ «7-ից մինչև 12-14 տարեկան հասակն ընկած ժամանակահատվածն անհատին տանում է դեպի ավելի շատ ինքնուրույնություն: Այդ պահից երեխաները, մեծերի հետ համատեղ, յուրովի ձգտում են իրավահավասար հասարակություն ստեղծելու: Երեխան սկսում է իրեն ընկալել որպես տարբեր հնարավորությունների կրող, փորձում է կողմնորոշվել տարբեր հասարակական հարաբերություններում: Նա համեմատում է դրանց նշանակությունը և իրեն չափում է դրանցով: Դեպի զարգացում տանող այդ նոր քայլով ավարտվում է նախապատրաստությունը կյանքին, որն էլ կազմում է մանկությունը»[2]:

Անչափահասների դասակարգումը երկու խմբի պայմանավորված է նրանով, որ 16 տարեկանում երեխան ձեռք է բերում որոշակի ինքնուրույնություն և իրավունքներ, որոնց հիման վրա էապես փոխվում է նրա կարգավիճակը:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարելի է նշել, որ երեխաների դեմ ուղղված հանցագործություններն ունեն աճի միտում, փոփոխվում է այդ հանցագործությունների ինչպես քանակական, այնպես էլ որակական ցուցանիշները, և դրանց դեմ պայքարն առավել արդյունավետ դարձնելու համար նախևառաջ անհրաժեշտ է հստակեցնել երեխաների դեմ ուղղված հանցագործությունների շրջանակը, քրեականացնել այնպիսի արարքներ, որոնց քրեականացումը պահանջվում է ՀՀ կողմից վավերացված միջազգային պայմանագրերով, դասակարգել երեխաների դեմ ուղղված հանցագործությունները և հնարավորության դեպքում կոդավորել դրանք ու այդ ամենի արդյունքում մշակել և կազմակերպել թիրախային պայքար յուրաքանչյուր տեսակի հանցագործության դեմ:

---

[1] Տե՛ս **Ղամբարյան Ա., Թումասյան Դ.** Երեխաների սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործություններն ու դրանց վարույթի առանձնահատկությունները. Եր., 2015, էջ 38:

[2] **Обухова Л.Ф.** Возрастная психология. М., 2000, էջ 65:

СОСТОЯНИЕ ПРЕСТУПЛЕНИЙ ПРОТИВ ДЕТЕЙ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ И ИХ ОБЩАЯ ХАРАКТЕРИСТИКА

Давид Тумасян
Начальник Управления правового обеспечения и статистики Департамента Следственного комитета РА

Статья посвящена общей характеристике законодательства РА о защите детей. В ней дана статистическая картина преступлений против детей в РА, указаны характерные данные указанных преступлений и их как количественные, так и качественные особенности. В статье раскрывается законодательно закрепленые формулировки уголовно-правовой защиты детей, а также классификация преступлений против детей.

STATE OF THE CRIMES AGAINST CHILDREN IN THE REPUBLIC OF ARMENIA AND THEIR COMMON FEATURES

David Tumasyan
Head of the Legal and Statistics Department of the RA Investigative Committee, Candidate of Legal Sciences

The article is devoted to the common features of the RA legislation on the protection of children. It provides statistics of crimes against children in the RA, specifies the characteristics of these crimes and their quantitative and qualitative features. The article reveals the legislatively established formulations of the criminal-legal protection of children, as well as the classification of crimes against children.

Բանալի բառեր – *երեխաների դեմ ուղղված հանցագործություններ, երեխաների քրեաիրավական պաշտպանություն, երեխայի իրավունք, երեխայի պաշտպանության մասին օրենսդրություն, երեխայի դեմ ուղղված հանցագործությունների վիճակագրություն, երեխաների դեմ ուղղված հանցագործությունների դասակարգում*
Ключевые слова: *преступления против детей, уголовно-правовая защита детей, права детей, законодательство о защите детей, статистика преступлений против детей, классификация преступлений против детей*
Key words: *crimes against children, criminal-legal protection of children, children's rights, legislation on child protection, statistics of crimes against children, classification of crimes against children*